ԹԻՎ 70-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի ԹԻՎ 18-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության վարչությունների կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 18-Լ հրամանի 1-ին կետով հաստատված 14-րդ հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) 19-րդ կետում՝

ա) 11-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11) Վարչության պետի հանձնարարությամբ, Վարչության Երևանի և մարզային հաշվառման-քննական բաժինների ծանրաբեռնվածությամբ պայմանավորված, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրանսպորտային միջոցներ վարելու միջազգային վարորդական իրավունքի վկայականներ տալը, վարորդական իրավունքի վկայականների փոխանակումը և կորած վարորդական իրավունքի վկայականների փոխարեն դրանց կրկնօրինակի տրամադրումը.».

բ) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12-րդ և 13-րդ ենթակետերով.

«12) Վարչության պետի հանձնարարությամբ, Վարչության Երևանի և մարզային հաշվառման-քննական բաժինների ծանրաբեռնվածությամբ պայմանավորված, տրանսպորտային միջոցների վնասված հաշվառման համարանիշերի փոխարինումը, զույգ հաշվառման համարնիշ ունեցող տրանսպորտային միջոցի կորած մեկ համարանիշի կրկնօրինակի հատկացումը.

13) այլ իրավական ակտերով սահմանված գործառույթների իրականացումը:»

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ 08.10.24թ

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ